# ՏԵՍԱՐԱՆ ՋՄԵՐԱՆ

—

## ՀԱՅ ՏՂԱՅ ՄԻ·

Ահա այլեք մեռեալ ծովուն, ցրտոտ ձմեռ հուպ ընդ հուպ,
Հաս, ոք չունիմ որ տայ մաշկեակն հէգ Հայրենեացս սիրասուն,
Ընդ ձորձոյ զգլխովս արկեալ, կամ կալայց Թրոյ նման,
Տով կամ բանակք խիտ Թշնամեաց ձեղքեմ փոյթ հալածական:
Որ Նախահարցս կրկին ոգւով՝ անցնիմ, շրջիմ սար ու ձոր,
Եդեմեան երկնից կատար, դէտակն ի վեր համբարձ բոլոր,
Յանգ որոնել աստղիկս Հայուն, ածել աւել ի մրոտ տուն,
Մինչ սոխակ գարնան սիրուն՝ երգէ ընդ Հայս ազատութիւն:
Թէպէտ ընկերն զիս անարգէ, և Թշնամին «եղ գնտակ»,
Յառնէ գազան անգ կատաղած, պխտի ցրուէ իմ կասկած,
Ուր գազանաց իմ այպանիչք՝ զէշ Թռչնոց գնեմ միս,
Մխթէ՞ դուք զիս վատ կկարծէք, առ որոնել Աստղեկիս:
Մելամաղձոտ դշխոյն ի բաց, զերարփին վեհ եԹերաց,
Աստղազարդ զերկնիւք զինչ կամար, սփռէին շողերն համակ,
Վերջին, անցեալք ընդ ամպերով չորցան ծաղկունք՝ դաշտ յոլով,
Գորշ գորշ յամպոց տեղատարափ ձիւն ձմերան վարէ հով:
Գոռ Հիւսիսէն Եւ-ղոս անուն՝ ասէ արիք բքալիր
Հողմոց ալեաց շղԹայազերծ շնչեն ուժգին, ըստ երկիր,
Մինչ տարազիր ուղևորը, նժդեհ, այրին ու որբիկ,
Հիւղեակք նոյին՝ ձնով լեցուած հեծեծելով աշխարհն:
Բոկիկ ոտքով չու ղարիպն, ամպրոպք, այերք ոչ խշտի,
Ով զռացին մռմռալով, ճամբայ զացի դէպ ի ծով,
Ճամբորդիկ ալէկոծեալ հոգւոց հանեմ ես ընդ ձնով,
Աչերս բացի՝ վերև երկինք ներքև երկիր՝ մէգ ու ձիւն:
Արև, Լուսին, աստղունք համրուն՝ Գարուն, Մայիս ծաղկասուն՝
Ով ծածկուած սև քօղերով, զոգցես յինէն զերԹ խռով,
Երասանաւոր բժոտ աչք ամպերու հետ ձայն տալով,
Ընդ արտօրայս, դաշտ համօրէն ման կուգամ ա՞խ կուրօրէն:
Աղաղակ կամ հառաչանք իմ բարձրանայ՝ անդ առ Որ Էն,
Մին մէկ զիէն, միւսն մէկ զիէն, ո՛այլ երկուք զիս կզոչեն,
Իսև աշխարհի չորս կողմունքն, Թևօքն իրանց զիս շալկեն,
Ամպրոպաշուփ շուխնչն ալեաց՝ զիս տալով օր օր կասեն:

Ո՜վ իմ ամպիկ՝ թխուկ ամպիկ՝ ո՞ւր քո գնացք արծուօրէն,
Դարձի՛ր ամպիկ դարձի՛ր շուտով իմ Հայրենին դրախտավայր,
Զի՛ս ընդ քեզ տար իմ աշխարհ՝ մեծատան պէս զիս տանջէ կայծ,
Կամ փութացի՛ր իմ ծնողաց, երկնակարկառ պերճ Մասեաց,
Պատմէ նոցա միշտ դարէ դար՝ իմ արկածքը խեղդամահ . . . . . :

ՊՕՂՈՍ Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
Բագրեւանդցի.

Ի Վաղարշապատ:

---

## ԳԱՃԱՃ ԵՒ ՍԱՊԱՏՈՂՆ.

Ո՜վ որ կարծէ զինքն անթերի
Նա իր անձին է գերի,
Ընկերին միշտ աչքին գերան կը թողու.
Այլոց շիւղը թըւի նմա ահարկու:

Գաճաճ մի կար խիստ կարճուկ,
Գունտ եւ գլոր գերդ թըղթուկ.
Գոռոզ կերպով վիզը տընկած,
Միշտ կքալէր սիգաձեւ,
Եւ լայն ճակատն իր կնճռոտած,
Նայուածքըն պաղ ու վըսեմ՝
Յօնից կամարք վեր վեր ցցուած,
Իրմէ զատ մարդ չէր տեսնէր,
Ամէն մէկը զատ զատ հըրեշ
Նորա աչացն երեւէր:
Ինքը թէպէտ այլոց մէջքէն հազիւ գար,
Բայց կըկարծէր զինք Գողիաթին հաւա-
սար:
Օր մի մինչդեռ սովորական
Կերպով կերթար ծանրաքայլ.
Սապատողն մի առաջն ելաւ.
—Որուն չըկար այլ եւ այլ . . . .
Գաճաճն անդ յանկարծ.
Կանգ առաւ մընաց.
Սապատողին վրայ կուշտ կուշտ կընայէր,
Քանի կերթար սըրտէն ծիծաղ կը փըրթէր,
Զի համբերից վերջապէս
Եւ ըսկսաւ ծաղրել այսպէս.
«Բարեւ պարոն, ո՞ւր կերթաս,
Միթէ դու քեզ չի գըթաս.
Կռնակդ առած ծանըր սապատ,
Կը զարնուիս պատէ պատ.
Բեռըդ դի՛ր վար.
Քիչ հանգիստ առ . . . :»—
—«Սապատս է պարապ,
Մի՛ հոգար ո՛վ տէր.
Սապատողն ի չափ
Նայաց անտարբեր.
Տեսայ ըզ քեզ խըղճացի,
Որ չըլլայ թէ մարդ կամ ձի
Հոս անհամար ոտից տակ
Կոխէն ըզքեզ տափ տափակ.
Ուստի արի՛ սապատիս մէջ՝ մըտի՛ր տէր,
Որով կըրնաս քալել անփորձ ու՝ անտարբեր:»

Լըռեց գաճաճն ամօթահար,
Թողուց իսկոյն հեռացաւ,
Առջի անգամ էր որ նա իւր
Հասակին չափն իմացաւ....:

ԱՌԱՔԵԼ ԱՆՏՕՆԵԱՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ.

Ի Սեբաստապօլ.